Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 1
Իրազեկող՝ Հասմիկ Միքայելյան
Զոհվածների հարազատների նախաձեռնության անդամ

**Իրազեկում**
**Հանրային հավաք և լուռ սգո երթ անցկացնելու մասին**

Հարգելի՛ պարոն Ավինյան,
Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝ իրազեկում ենք Ձեզ, որ 2026 թվականի սեպտեմբերի 19-ին Երևան քաղաքում նախատեսվում է անցկացնել «Հիշատակի օր» խորագրով հանրային հավաք և լուռ սգո երթ՝ ի հիշատակ հայրենիքի կորստի և նահատակների։
Հանրային հավաքի և լուռ սգո երթի նպատակն է հարգանքի տուրք մատուցել 1988–2023 թվականներին Արցախի ազատության, անվտանգության և հայ ժողովրդի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած մեր հայրենակիցների հիշատակին, ինչպես նաև ոգեկոչել անհայտ կորածներին, գերության մեջ գտնվող մեր հայրենակիցներին, ռազմական գործողությունների, բռնի տեղահանության և դրանց հետևանքների պատճառով զոհված խաղաղ բնակիչներին ու 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Արցախում վառելիքի պահեստում տեղի ունեցած ողբերգական պայթյունի զոհերին։
Միջոցառումը նպատակ ունի զոհվածների ընտանիքներին, հարազատներին և հանրության տարբեր խմբերին համախմբել մեկ միասնական հիշատակի արարողության շուրջ՝ խաղաղ, արժանապատիվ և լուռ ձևով հարգանքի տուրք մատուցելու զոհերի հիշատակին։
Միջոցառումը նախատեսվում է անցկացնել խաղաղ հանրային հավաքի և լուռ սգո երթի ձևաչափով։ Մասնակիցները կարող են իրենց հետ ունենալ զոհվածների և անհայտ կորածների լուսանկարներ և դիմանկարներ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դրոշներ, ծաղիկներ, հիշատակի խորհրդանիշներ, ինչպես նաև միջոցառման նպատակին և բնույթին համապատասխան պաստառներ։
Հավաքը նախատեսվում է սկսել 2026 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 12:00-ին, «Եռաբլուր» զինվորական պանթեոնի մուտքի կամարի հարակից տարածքում։

Այնտեղից մասնակիցները լուռ սգո երթով կշարժվեն դեպի պանթեոնի տարածք։ Միջոցառման ավարտը նախատեսվում է ժամը 15:00-ին։

Միջոցառմանը նախատեսվում է մինչև 1000 մասնակցի ներկայություն։ Հավաքի և երթի խաղաղ ու բնականոն ընթացքն ապահովելու նպատակով ներգրավված կլինի 10 կարգադրիչ։

Հավաքի և երթի ընթացքում նախատեսվում է օգտագործել բարձրախոս, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դրոշներ, պաստառներ, զոհվածների և անհայտ կորածների լուսանկարներ, ծաղիկներ, հիշատակի խորհրդանիշներ և միջոցառման խաղաղ ու սգո բնույթին համապատասխան այլ միջոցներ։

Երթի ավարտին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում նախատեսվում է իրականացնել հիշատակի արարողություն՝ աղոթքով, ծաղիկների խոնարհմամբ զոհվածների շիրիմներին և լռության րոպեով։

Միջոցառման ամբողջ ընթացքում կազմակերպիչներն ու կարգադրիչները կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ դրա խաղաղ, արժանապատիվ և բնականոն ընթացքն ապահովելու և հասարակական կարգը պահպանելու համար։

Խնդրում ենք սույն իրազեկումս ընդունել և դրան ընթացք տալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Հարգանքով՝

Հասմիկ Միքայելյան

Զոհվածների հարազատների նախաձեռնության անդամ